ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Թուրքիայում բնակվող համշենցի Մահիր Օզքանին կարելի է համարել համշենական մտավորականության ներկայացուցիչ: Ներկայումս նա զբաղվում է մանկավարժությամբ և դասավանդում է դպրոցում: Վերջերս թուրքական մամուլում տպագրված նրա հոդվածը վերաբերում է համշենցիների ինքնության խնդիրներին, որում հեղինակը փորձել է դասակարգել ինքնության դրսևորումները: Հոդվածն ուշագրավ է հատկապես այն առումով, որ խնդիրը ներկայացվում է հենց այդ հասարակության մեջ ապրող և մանրամասներին լավ ծանոթ համշենցու կողմից: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ սա կարելի է համարել «հայացք ներսից», որը, բնականաբար, ավելի խոր և հանգամանալի է: Թուրքիայում ապրող համշենցիների ինքնության բաժանումները բավական իրատեսական են թվում: Ստորև որոշ կրճատումներով թարգմանաբար ներկայացնում ենք հոդվածը:

Ռ.Մ.

Համշենցիները ժողովուրդ են, որ պատմության ընթացքում մի շարք տրավմաներ են ապրել: Անմիջականորեն իրենց հետ և իրենց շուրջը զարգացող դեպքերի ազդեցությունը կրում են որպես մի մեծ բեռ: Ասվածի ամենակարևոր ապացույց պետք է համարել նույնիսկ ամենափոքր քննարկման ժամանակ համշենցիների ինքնության վերաբերյալ նրանց արձագանքները: Համշենցիները, ձուլմանը զուգընթաց, ինքնության լուրջ ձևափոխման են ենթարկվել: Համշենցու համար մուսուլմանություն ընդունելն առաջին մեծ տրավման էր, երկրորդը 1915թ. կոտորածն էր: Երրորդ տրավման, կարելի է ասել, Համշենից արտագաղթերի առաջացրած մասնատվածությունը եղավ:

Այս ամենը գումարվեց Թուրքիայի Հանրապետության՝ բոլոր ինքնությունները մերժող և Օսմանյան կայսրության մնացուկ համարվող այն հասկացության հետ, համաձայն որի՝ բոլոր մուսուլմաններին թուրք են համարում: Եթե դրան ավելացնենք այն փաստը, որ համշենցիներին հայ են կոչում, սակայն միայն որպես հայհոյանք, ապա պարզ կդառնա, որ համշենցիները, համեմատաբար փոքր ժողովուրդ լինելով, գրեթե չէին կարող չփոխել ինքնությունը:

Համշենցիների նկարագիրը միատարր չէ: Մինչ օրս Համշենի պատմության և մշակույթի մասին արված հետազոտություններից դատելով՝ դրա պատճառը, պատմական լինելուց ավելի, սոցիալ-հոգեբանական է:

Համշենցիների ինքնության դրսևորումները

1. ***Ձուլված ինքնություն.*** Այս խումբն առավելապես կորցրել է կապն իր մշակութային արժեքների հետ կամ էլ դրանք պահել է, սակայն լոկ պարզ բանահյուսական մակարդակի: Ինտեգրված են թուրք ժողովրդին: Նրանց զգալի մասը սկսել է ապրել մեծ քաղաքներում: Այս խմբի մեծ մասը Ռիզե Համշենից է (Բաշ Համշեն), սակայն կարելի է հանդիպել Համշենի այլ վայրերում ևս: Նրանք իրենց առավելապես թուրք են համարում և ապրում են որպես թուրքեր: Այս խմբում էթնիկ ծագման մասին առկա է տգիտության հասնող լուրջ անտեղյակություն: Ոմանց մոտ հոգու խորքում դեռևս հայկական ծագման վերաբերյալ աղոտ մտքեր եթե կան էլ, ապա ձգտում են դրանցից արագ ձերբազատվել և «տեղավորվել» մուսուլման թուրքի ինքնության մեջ:
2. ***Մերժողական ինքնություն.*** Հայկական ինքնությունը գաղտնապես իմանալով հանդերձ՝ արտաքին աշխարհին, իրենց երեխաներին ու շրջապատին գիտակցաբար սուտ են ասում: Թաքցված ինքնություն է և հակված է ձուլվելու, սակայն դեռ շատ ուժեղ մշակութային կապերի պահպանումը խանգարում է լիակատար ձուլմանը: Այս խմբում կան նաև միկրոազգայնական հայացքների ձևավորման նախադրյալներ: Այս ինքնությունը,

Հռոմի պապից ավելի կաթոլիկ լինելով, երբեմն վերափոխվում է թուրքական ազգայնականության և վերածվում միկրոազգայնական համշենցու: Այս հակասությունները միևնույն ժամանակ ցույց են տալիս, որ խմբում դեռևս առկա է առերեսվելու և հակասություններից ձերբազատվելու հնարավորություն: Խումբը համշենցիների ամենամեծաթիվ խումբն է, և հնարավոր է հանդիպել բոլոր տեղերում, որտեղ ապրում են համշենցիներ:

3. ***Անտարբեր ինքնություն.*** Ինքնություն, որը տարբեր պատճառներով չի հետաքրքրվում խնդրով (հայկական ծագմամբ- Ռ.Մ.): Նրանք գիտեն իրենց հայկական ծագման մասին և ընդունում են դա, սակայն անմիջապես, հայտնի փաստարկներով, ձգտում են ազատվել այն կրելու բեռից: Ամենակարևոր և տարածված փաստարկներից մեկը հետևյալն է. «Անատոլիայում ապրող մի շարք ժողովուրդներ կային, և նրանք բոլորը միասին ազատագրական պատերազմ են վարել ու ձևավորել թուրք ազգը: Ինչ ծագում ուզում ես ունեցիր, արդեն ոչ մի նշանակություն չունի»: Այս արտահայտությունը, որն ավելի շատ միտված է մերժողականությանը փոքր-ինչ խելամիտ երանգ հաղորդելուն, որքան էլ զարմանալի է, տարածված է մտավորական շրջանակներում: Տարածված է նաև այն միտքը, թե իմաստ չունի էթնիկ ինքնությունն առաջ տանել. ավելի մեծ խնդիրներ ունենք, կարևորը տնտեսությունն է, գործազրկությունը, նախ թող փորդ կուշտ լինի, ինքնությունը կարևոր չէ: Իրականում բուն նպատակը հարցի ծանրությունից խուսափելն է, քանի որ տնտեսության հետ կապված իրողությունները թվարկելը մյուս հարցերը չի վերացնում: Մյուս տարածված տեսակետը, որը ժխտողականությունն և անտարբերությունը մեղմելուն է միտված, կիրառվում է հատկապես կրոնական կրթություն ստացած հատվածի կողմից, այն է՝ բոլորս մուսուլման ենք: Ըստ նրանց, կարող ես հայկական էթնիկ ծագում ունենալ, սակայն կարևորը ոչ թե էթնիկ, այլ կրոնական ինքնությունն է: «Բացի այդ, մենք հայերից ավելի շատ թուրքերին ենք նման»,- գտնում են նրանք: Այս արտահայտությամբ ևս ձգտում են մեղմել ժխտումը: «Օրինակ՝ պատմության ընթացքում երբեք իսլամը յուրացրած հայ ժողովրդի չենք հանդիպել, այլ հակառակը՝ գիտենք, որ նրանք մուսուլմանների և իսլամի դեմ թշնամական մոտեցում են որդեգրել: Մինչդեռ մենք՝ համշենցիներս, փառք Աստծո, մուսուլման ենք և մուսուլման էլ կմնանք»:

4. ***Առերեսման պատրաստ ինքնություն.*** Ինքնություն, որն իր ծագման մասին որևէ տեղեկություն իմանա, թե ոչ՝ պատրաստ է ընդունել իր ինքնությունը: Նպատակն է՝ իմանալ իրականությունը: Ցանկանում է ինքնարտահայտվել՝ առանց ստիպվելու թաքցնել ինքն իրեն կամ տարբեր դերերի մեջ մտնել: Նույն կերպ պաշտպանում է նաև հարևան ու բոլոր ժողովուրդների ազատ ինքնարտահայտվելու իրավունքը: Ինքնարտահայտվելը համարում է ոչ թե ազգայնականություն, այլ եղբայրաբար համատեղ ապրելու պայման: Հավատում է, որ ինքն իրենից չամաչող, բարդույթներ չունեցող, իրենց անցյալի հետ առերեսված մարդիկ և հասարակությունները կարող են առողջ ապագա կերտել:

Եզրակացություն

Սև ծովն արդեն սկսել է ինքն իր հետ առերեսվել: Մեր ժողովուրդներն իրենք իրենց երաժշտությամբ, փառատոներով, ինտերնետով և մի շարք այլ միջոցներով ինքնարտահայտվում են: Սակայն մեր ամենակարևոր խնդիրը մնում է անտեղյակությունը: Համշենցիները ոչպե առաջ պետք է հրաժարվեն իրենց ինքնությունը ժխտելուց և լծվեն կորստի եզրին հասած մշակութային տարրերը հավաքելու, ժողովածուներ պատրաստելու, իրենց արժեքները փրկելու գործին:

Մահիր Օզքան
Թուրքերենից թարգմանեց
Ռուբեն Մելքոնյանը